



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԱՐԳԱՅՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (374) 93968825, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 299-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ
ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով, «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մարգահովիտ համայնքի ավագանու 27.05.2020թ. թիվ 22-Ա որոշումը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Մարգահովիտի համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան շենքի չօգտագործվող սենյակներից 47 քմ վարձակալությամբ տրամադրել Սերյոժա Սամվելի Սարգսյանին:
2. Սերյոժա Սամվելի Սարգսյանի հետ կնքել վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման:
3. Յուրաքանչյուր ամսվա վարձավճար սահմանել 4700 /չորս հազար յոթ հարյուր/ դրամ:
4. Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև ընթացիկ ամսվա 10-ը:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (374) 93968825 , margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2020թվականի N 300-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով թիվ 1744045 վկայականում տեղի ունեցած սխալը գրառումը ուստի

որոշում եմ՝

1. Մարգահովիտ համայնքի թիվ 02 տնտեսական գրքի թիվ 161 գրանցման մեջ մեր կողմից կատարվել է սխալ գրառում Վերիչկա Արմենակի Մելիքսեթյանը սխալմամբ գրվել է Վերիչկա Արմենակի Մարգարյան, կատարել փոփոխություն (ուղղում):
2. Որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. Ս. ԱՆԱՆՅԱՆ